

ապում են Մովսրի նրա առաջածնների ու նրա մերձնական զատապարտութեան հետ։ Ուստի շատ սիրում են գեղեցիկ քարոյներ լսել։ Ինչ որ քարոյելը հասկանայ, կարող է քեզ այնտեղ հասցնել, որ աչքերդ ջուր կոխեն, բայց այս է բոլորը։ Հեռեկալ օրը դարձեալ բոլորովին աշխարհի մէջ եւս ուր որ քո սիրան է և ուր որ քո կեանքն է խաղի մէջ։ Ո՛հ, Ո՛հ, Որիան կոչաւ ու սառը կերպով չքրաժանուեցաւ նոսմից, այդպէս էլ շատերը քաղաքախրութեամբ ու հեղութեամբ մերժում են Յիսուսին։ Եւ Աստուած երկնքում որոտայից ձայնով ասում է. «Ձեք կարող Աստուծուն ծառայել և մամոնային», կամ՝ այսպէս կամ այնպէս դուքս կամ ներս—Քրիստոս կամ Բեւիտար—այստեղ չկայ կանգ առնելու տեղ և չկայ միջին ճանապարհ։ Ո՛հ, ինչպէս հեշտ խորում ենք։ Կարծում ենք, երբ որ քարոյի ժամանակ զգացուում ենք, քանի որ հաճելի է մեզ երգեցողութիւնը, ուրեմն մեր գործը յաջող է։ Ո՛վ Աստուած, ոգորմիր այդ ինչպէ՞ մարդկանց, որ նոսմիին համբուում են ու յետոյ բաժանուում։ Վախենում եմ, որ շատերը Քրիստոսին ուրիշ բան չեն տալիս, բայց իրանց ժառանգած կրօնից։ Բայց նրանց համբոյրը նրանից բաժանուելու նշան է։ Ինչպէս Յուդայի համբոյրը մասնութեան նշան էր։ Թէ որ սրտից խորքը պարենք նոյն իսկ աղօթքը, կեկեցել գնալը խորհուրդների արարքին գործադրութիւնը ձանձրալի մի պարտականութիւն է քեզ համար։ Բայց յարմար չես սկսում ամենը թողնել։

Որիան ճանապարհ ընկաւ դէպի տուն, արատուքները սրբեց, ու ամեն միանգամ երբ պիտի ճանապարհը ծռուէր, կանգ էր առնում ու յետ մտիկ տալիս արդեօք Հոռութիւն չի գտնուի։ Բայց նա չեկաւ։ Նոսմու համար նրանք մշտապէս բաժանուեցին միմիանցից։ Յիսուս միայնում է կամ լրաժանում է մեզ մշտապէս։

Եւ հիմայ դարձեալ դառնալը Հոռութիւն։ Եւ արածով կորցրեց մի բան։ Թողնելով աշխարհային խնամտութիւնը, խելօքութիւնը ու զոհութիւնը, գնաց այն աղբատ պառաւ կնոջ հետ։ Վնաս ունեցաւ։ Եւ Որիան որ սրտի ձայնին չստիպով խելքին հեռեց—«Ինչ շահեցաւ։ Բան չըկանք նրանից, որովհետեւ գրեւած

չէ։ Նա յետ դառաւ Մովսրի երկիրը։ Բայց Հոռութի կեանքը դարձեալ նորոգուեց ու արժանի եղաւ Փրկչի սերունդի մէջ մայր լինելու։

Աստուած օգնի մեզ, որ արտաքին գրաւող վարքը թողնենք ու սկսենք հաւատքի ծառայարհով ընթանալ։ Այստեղ մնայուն տեղ չունենք։ Կանգնողութեան եւ հիւրեր ենք երկրի վրայ, երկրի բարեքները շարունակ մերը չեն լինելու։ Ապագան է մերը։ Փարիք Քրիստոսին սրտի ի որոշումով և յաւիտեական կեանք կգաննուի։

*
**

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՌՌԻՍՍՅ ԵԿԵՂԵՑԻ

Վերջին ժամանակներս ռուսաց կրօնական մամուլը սկսել է իւր առանձին խորհրդածութեան առարկայ դարձնել աղանդաւորների միութեան հարցը պրավոսլաւ եկեղեցու հետ։ ПЕРКОВ. ВѢСТ. շաբաթաթերթը № 7-ի մէջ այդ մասին հետեւեալն է ասում. «Աղանդաւորների վերադարձը պրավոսլաւ եկեղեցու ծոցը տակաւին հեռու ապագայի դորձ է։ սակայն այդ ապագան անվիճելի է, որ դնալով աւելի յուսալիլ է դառնում, որովհետեւ ինչպէս միտոնեական հաշուեաւորութիւններն ու հաղորդակցութիւնները ցոյց են տալիս, աղանդաւորների անհաշտ և անպայման բաժանման ձգտող հոգին ևս հետզհետէ թուլանում է։ Շաբաթաթերթը շարունակելով, ասում է, որ աղանդաւորների և պրավոսլաւ եկեղեցու ներկայացուցիչներն մէջ արդէն քանկաց դէպքեր են պատահել, որոնց նպատակը նրանց հաշտուելն ու իրար մօտենալն է։

*
**

Պետերբուրգում հրատարակուող «СПБ. ДУХОВНЫЙ ВѢСТ.» թերթի խմբագիր աւագ քահանայատէրին վեց տարեկան թերթի խմբագրի ծանր և պատասխանատու պաշտօնը վարելուց յետոյ՝ հրաժարուել է իւր պաշտօնից։ Նոր խմբագիր է նշանակուած Լախտատէի քահանայ։ Նախկին խմբագրի օրով յիշեալ թերթը նիւթական բաւական մեծ զուտ է ունեցել, տարեկան մօտ 2 1/2 հազար ռուբլի։ Այս առթիւ ПЕРКОВ. ВѢСТ.-ը տխուր եզրակացութեան է գալիս, ասելով. «Եթէ մեր մայրաքաղաքի հոգևոր մամուլի յառաջագործութիւնը այդպէս կազմւում է, հապա ենք կրննք գաւառական եկեղեցական թերթի մեծ երեւոյթ։

Հիւսիսային Ամերիկայում «Живая церковь» թերթը հաղորդում է, որ վերջերս պրովոստաւն ի-
ութիւնը այնտեղ յառաջագիմութեան մեծամեծ
քայլեր է անում: Մօտ օրերս մօտ 500 հոգի ա-
մերիկացի կաթոլիկներ, ընդունելով պրովոստա-
ւնիութիւն, մտել են օրթոդոքս եկեղեցու ծոցը:

* * *

Անցեալ տարւումնց սկսած ռուսաց եկեղե-
ցին հետամուտ է լինում Անդրկասպեան երկրում
այսպէս կոչուած «պրովոստաւ եղբայրութիւններ»
հիմնելու գործին: Երոնց նպատակը պրովոստա-
ւնիութիւն տարածելն է: Եղբայրութեան նպա-
տակն է ըստ կարելոյն լիակատար կերպով կրօ-
նական—բարոյական կրթութիւն և գաստիարա
կութիւն տարածել Անդրկասպեան երկրում: Եղ-
բայրութիւնը հոգ է տանելու զանազան համայնք-
ներ կազմակերպելու, նրանց համար եկեղեցիներ
և աղօթատներ շինելու: Երգեցիկ խումբ պատ-
րաստելու, առանց վճարի հատարակաց ընթերցա-
տուն հիմնելու, ուսումնարաններ բաց անելու:

* * *

Փետրուարի 19-ը Ռուսաստանի համար մեծ
օրերից մէկն է, ուղիղ 40 տարի սրանց առաջ
1861 թուին այդ օրը Աղէքսանդր Բ. կայսրը իւր
մի հրովարտակով ազատութիւն շնորհեց գիւղա-
կան ազգաբնակիւթեան: Վերջ տալով ստրկու-
թեան: Յիշեալ օրը ընդարձակածաւալ ռուսաց
պետութեան բոլոր կողմերում եկեղեցական և
ազգային հանգէտներ են կատարուել ի յիշատակ
ազատարար կայսեր:

ՍԵՐԲԻԱ.

Վերջերս Սերբիայում նկատուում է մի զօրեղ
հոսանք ռուսաց լեզուն այնտեղ սովորեցնելու
և տարածելու համար: Բելգրադում հրատարա
կուող «БРОТНСТВО» լրագիրը այդ խնդրին նուիրել
է մի յօդուած, որի մէջ ցոյց է տալիս ռուս
լեզուի և գրականութեան զարգացումը: Լրա-
գիրը ամէն կերպ ջանք է գործ դնում ապացու-
ցանելու, թէ ռուս լեզուի ուսուցումը որ աս-
տիճան օգտաւէտ կարող է լինել սերբիացի-
ներին ինչպէս մտաւոր այնպէս և անտեսական
յարաբերութեանց մէջ: Լրագիրը շարունակելով
ասում է. «Թէ ի նկատի առնենք նոր շինուելիք
երկաթուղու այն զիծը, որ կ'կապի Սերբիան Ռու-
սիայի և Ռուսաստանի հետ, որ անշուշտ մեծ
զարկ կ'առայ այդ երկու ցեղակից ազգերի մօտե-
նալուն, այն ժամանակ սերբիացիներին համար

ռուսաց լեզուի գիտութիւնը շատ օգտակար կը-
լինի»:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Այն մեծ շարժումը, որ Իսպանիայում սկը-
սեցաւ եզուիանների դէմ առկա լին զբաղեցնում
է իսպանական հառարակութիւնը և թէ՛ մամու-
լը: Այդ շարժումը ընդհանուր առմամբ կրում է
հակակղերական ընտրորութիւն և մինչ այն առ-
տիճան որի կերպարանք ստացաւ, որ շատ հեշ-
տութեամբ կարող է յեղափոխութեան փոխուել:
Թէ ինչ պատճառներից առաջացաւ այն շարժումը,
բաւական պարզ է: Իսպանիան միշտ եղել է այն
վայրը, ուր եզուիանները և ուրիշ շատ միաբանու-
կան կարգեր իշխել են և չ'նայելով այն հալա-
ժանքներին՝ նրանք այնուամենայնիւ կարողացել
են այնտեղ իրենց գոյութիւնը պահպանել: Իս-
պանիայի ամբողջ բնակիչներին թիւը հասնում է
մօտաւորապէս 15 միլիոնի, որից 70,250 հոգին
կրօնաւորներ են: Նրանք մեծամեծ հարստութեանց
տէր լինելով՝ բաւական մեծ ազդեցութիւն ունին
նաեւ երկրի քաղաքական և հասարակական կեանքի
վրայ: Նրանց ձեռքն է ծխախոտի մենապաճառու-
թիւնը, վանքերում ունին զանազան գործարան-
ներ: Սրանք ըստ ամենայնի հարկից ազատ են:
Ահա նիւթական այդ հարստութեանց շնորհիւ է,
որ եզուիանները բառի բուն նշանակութեամբ իշ-
խանութիւնն ամբողջապէս իրենց ձեռքը առան՝
գործադրելով այն անսահման կերպով: Բնա-
կան է, որ երկրի այս վիճակը առաջ բերեց հա-
սարակութեան և ժողովրդի մէջ հակակրօնը դէպի
եզուիանները, նոր ատելութիւն դէպի նրանց
բռնած զիջքը, ներկայումս Իսպանիան այդ
պատճառով ներքին մեծ տաղնապի մէջ է:

* * *

Մարտի 2-ին (Ն. Տ.) Լեւոն ԺԳ. պապը
լրացրեց իր կեանքի 91 տարին: Նորին սրբութիւնը
ծննդեան տօնի առթիւ ընդունեց բազմաթիւ
շնորհաւորութիւններ: Տեղական հոգեւորականու-
թիւնը՝ իրեն գլուխ ունենալով կարգիւնալներին՝
բազմ ունեցաւ անձամբ Հոգեւոր Հօր ներկայանալ
և նրա օրհնութիւնն ստանալ: Կարգիւնալ Օռէդ-
լիս այդ առթիւ արտասանեց մի ուղերձ, որի
մէջ նա բարեմաղթութիւններ արաւ Ս. Աթոռի
յարստութեան և գահակալի արեւշատութեան

Համար՝ Պատը լւր հայրական օրհնութիւնը տա-
լով լալեկներին՝ առանձնատեղեակ քաջուկցաւ :

❖ ❖
❖

Անգարայիցում աղտոտմիտները շարունակ
հետամուտ են լինում և աշխատում են ոչ մի
տակի՝ ձեռքից չթողնել կաթոլիկ եկեղեցին ան-
սամարիեյու համար: Եւգլուի կաթոլիկ եպիս-
կոպոս Յովսէփ Սամատան ի նկատի առնելով
այդ՝ մի շրջաբերական է հրատարակել, որի մէջ
են պաշտպանում է կաթոլիկ եկեղեցու սկզբունք-
ները և նրանց ճշմարտութիւնը, միևնոյն ժամա-
նակ յորդորում է իր հօտին, չխաղուել աղտոտ-
միտներէ յիմար քաղաքացիներէց: այլ հաստա-
տուն մնալ կաթոլիկ եկեղեցու հաւատի ճշմար-
տութեան մէջ: Եպիսկոպոսի այդ շրջաբերականը
տակի է եղել ունդարական մամուլի մէջ զանա-
կան դեր ու դէմ կարծիքներէ երևան գալուն:

❖ ❖
❖

La Ierarchia catolica հրատարակել է կաթո-
լիկ եկեղեցու նուիրապետութեան վիճակագրու-
կան մի ցանկ: Այդ ցանկի համաձայն ներկայումս
կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորական
անդամները թիւը 1225— է, 56 կաթոլիկաւ, 725
իսկական արքեպիսկոպոս և եպիսկոպոսքստ արևմ-
տեան ծիսի, 49 արքեպիսկոպոս և եպիսկոպոս
քստ արևելեան ծիսի, 374 օտարոտով արքեպիս-
կոպոս և եպիսկոպոս և 10 առաջնորդ (pralat)
առանց թեմի:

ԲՈՂՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԷ

U. 9. L. 1. U.

Chronik der chrstl. welt № 9 օր մէջ զեան-
դում է մի շահագրգիռ յօդում: Եր ցոյց է ա-
լիս կալվինականութեան վիճակը 19-րդ դարում
Անգլիայում: Անգհանուր եկեղեցական պատմու-
թեամբ զբաղուողներէ համար անշուշտ շատ հե-
տաքրքրական յօդում է այն: Մենք առաջ կըն-
քենք այդ յօդումէ բական միտքը, մանրամաս-
նութիւնները մի կողմը թողնելով: Մինչև 19-րդ
դարու սկիզբը կալվինականութիւնը Մեծ Բրիտա-
նիայում դոյութիւն ունեցող կրօնական ուղղու-
թիւններէ մէջ առաջնակարգ տեղ է բռնելիս ե-
ղել. նա աւելի զօրեղ և տարածուած է եղել
Շոտլանդիայում, քան բուն Անգլիայում: Սակայն
այդ յաջողութիւնը դադարում է, երբ կալվի-
նականութեան մէջ շարժումներ են ծնունդ
առնում: 19-րդ դարու ընթացքում կալվինակա-
նութիւնը սկսում է կամաց կամաց տաքրալուծ-
ուել և տեւում է մինչև նոյն դարու վերջը: Այսօր

Անդրկայուն հաշվենական թիւն համարեա թիւ
չէ նկատուում:

✻ ✻
✻

Անգլիայի նոր թագաւորն արդէն կառաւր-
չապէս իր պաշտօնի մէջն է։ Դասերը յոյս էին
աւժուում սպասում, որ նա միջոցներ ձեռք կառ-
նէր Հարաւային Ամերիկայի պատերազմը դադա-
րեցնելու համար, սակայն այդ յոյսերը ի դերն
էլան։ Թագաւորը ըստ երեւոյթին պատերազմը
կշարունակէ մինչև վերջը, չ'նայելով այն մեծա-
քանակ ծախսերին, որ Անգլիան պատերազմի
պատճառով արել է և պէտք է դեռ անէ։ Անգլիան
մինչև այժմ ծախսել է 81,500,000 ֆունդ ստեր-
լինգ, որ ունել քան 800 միլիոն բուրլէ է անում։
Իսկ այժմ անգլիական կառավարութիւնը շարա-
ւիտան մօտ 12½ միլիոն է ծախսում։

❄ ❄
❄

Անգլիական մամուլը շարունակում է տա-
կալին ողբալ այն մեծ և անսխալարենելի կորուստը,
որ անգլիական եկեղեցին ունեցաւ ի գէժս ՚ի Տէր
հանդուցեալ Լոնտոնի եպիսկոպոս Կրէյտոնիւ ւան-
գուցեալը լաւ կրթութեան տէր էր, յայտնի էր
երբև եղիանական և նախ քան եպիսկոպոս ձեռ-
նադրուիլը՝ նուիրելով իրեն գիտութեան, հրա-
տարեկում էր մի թերթի ուր բացատարէս գիտ-
նական յօդուածներ էին լոյս տեսնում: Նրա հա-
մար մեծ ցաւ էր, թողնել իւր այդ սիրելի պա-
րապմունքը, որին նա իր ամբողջ հոգով նուիրուած
էր, և ընդունել Լոնդանի եպիսկոպոսի պաշտօնը,
Այդ առթիւ նա մի անգամ ասել է հետեւեալ
խօսքերը. «Նա ամենեւին չէի ցանկանում եպիսկո-
պոս դառնալ, որովհետեւ ես ինձ երջանիկ էի
ըզում, երբ ես իմ զբերոյս աշխատում էի»:
Թէև նա յետոյ եռանդով կայաւ և եպիսկոպո-
սական պաշտօնին բայց նրա անթիւ գործնական
պարապմունքները թոյլ չէին տալիս, որ նա իր
սիրած գիտութեամբ պարապել կարողանար: Հէնց
այդ պատճառին պէտք է վերագրել, որ նա իւր
սկսած երկը՝ պապերի պատմութիւնը կրօնական
յիշատիոյթեան շրջանում՝ անկարող եղաւ վեր-
ջացնել: Նա չէր կարող գիտութեամբ պարապել,
որովհետեւ նա տարեկան միջին թիւով ի պաշ-
տօնէ խօսում էր մօտ 288 քարոզ և այլ բովան-
դակութեամբ ճառեր, նախադաճում էր զանազան
ժողովների և ստիպուած էր օրական 60 նամակ
ցրուել այս ու այն կողմ: Տարեկան ստանում էր
նա 10,000 ֆունտ ստերլինգ—100,000 բուբլի
ռուսիկ պետական դանձարանից: Զնայելով այդ-
բաւական խոշոր գումարին, այնուամենայնիւ նա
շարունակ պարտքի տակ էր, նա ոչ թէ իրեն
համար էր այն ծախսում, այլ իւր ժողովրդի՝ Նը-

բան դիմողներին ոչ ոք բռնայն ձեռքով յետ չէ գարձել: Նա վայելում էր անգլիական ժողովրդի կատարեալ սէրն ու համակրութիւնը:

*
*
*

ՃԱՓՈՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ.

Այս տարի յունուարի վերջին Նիւ—Եորկում գումարուած միտիններական ընկերութեանց ժողովը՝ որին մասնակցում էին հիւսիսային Ամերիկայի և Վանուաթայի դանադան ընկերութեանց ներկայացուցիչներ, Հերթական Նիստերի առարկան Ձինաստանում առաջ եկած անկարգութեանց պատճառները դարձնելով՝ ժողովն զբաղուեցաւ բուդդայական կրօնի ներկայացուցիչներին այն շքեղաբերական գրութեան քննութեամբ, որ ուղղել են ճափոնիայի հոգեւորականները ամբողջ աշխարհի իրենց կարգակից եղբայրներին: Բուդդայի աշակերտների կարծիքով, որոնց գլուխները առանձնապէս աչքի է ընկնում արեւելեան ազգերին յատուկ նուրբ և վառվառն ոճով, Ձինաստանի անկարգութեանց և խռովութեանց պատճառը պէտք է որոնել մի միայն եւրոպական և ամերիկական միտինարների այն անհամակրելի գլխի մէջ, որ նրանք ընտելւած են դէպի չին ժողովրդը: Միտինարները իրենց անխոհմտութեամբ վարմունքով շատ յաճախ պատճառ են եղել երկրի մէջ զանազան յազմանքների ծագելուն, որոնց առաջը սակայն շուտով աւնուելով, հանդարտուել են կրկին: Բայց վերջին տարիներտ այլ ևս անտանելի էր նրանց գոյութիւնը չինական ժողովրդի աչքում: Հալածանքը անխուսափելի էր. ահա սկսուեց այն, որ անելով քաղաքական կերպարանք ստացաւ: Ճափոնիայի հոգեւորականները շարունակելով, մի շարք կատարուած իրողութիւններ են մատնանել անուժ և խորապէս համոզուած են, որ քրիստոնէական կրօնի քարոզիչները երբեք չեն համապատասխանում իրենց վսեմ կոչմանը: Յիշեալ ժողովը, այն գրութեան մասին երկար ու բարակ խորհրդածութիւններ անելուց յետոյ, որոշում է նրան պատասխանել: Պատասխանը գրում է, որ աւելի պոլիմիկական ընտելութիւն ունի և շատ հեռու է իսկական և իսկապէս խնդրին վերաբերուող հարցերը շօշափելուց:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ

ՈՐՊԼՍ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆ

Ա.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ քրիստոնէական եկեղեցու բնորոշ գծերից մէկն է. առաքելական շրջանից սկսած բարեգործութիւնը քարոզւում է ոչ միայն որպէս անհատական, այլ և համայնական առաքինութիւն: Քրիստոնէական եկեղեցու նուիրապետութեան կազմակերպութիւնից յետոյ՝ բարեգործութիւնը, բարեգործական հաստատութիւնները եկեղեցու վարիչների գլխաւոր հոգացողութեան առարկայ են եղել: Եկեղեցու բոլոր նշանաւոր հայրապետների անունները կապուած են քրիստոնէական բարեգործութեան պատմութեան հետ: Բարեկց Կեսարացին առաջին անգամ հաստատուն կերպով քրիստոնէական բարեգործութիւնը կապեց վանքերի և վանականութեան հետ. բայց նոյն ձգտումն ընդհանուր էր Վ. և Ն. դարու բոլոր նշանաւոր հայրապետների համար: Որպէս օրինակ յիշենք միայն որ Յովհան Ասկերերան 7700 հոգի էր կերակրում և երկու մեծ ասպնջանոց պահում Վ. Պոլսում:

Քրիստոնէական բարեգործութեան այսպիսի զարգացումը բղխում էր պարտքի զգացումից, ինչպէս քարոզել էր մեր կրօնի Հիմնադիրը, բայց մի և նոյն ժամանակ սիրուց բղխած գործունէութիւնը մի դօրաւոր միջոց դարձաւ եկեղեցու բարոյական հեղինակութիւնը բարձրացնելու: Պատգամականութեան զարգացման պատմութիւնը ակնյայտի կերպով ցոյց է տալիս որ նորա հեղինակութեան բարձրանալուն քիչ չէ նպաստել քրիստոնէական այն կարեկցութիւնը, որ Հռովմայ հայրապետները ցոյց էին տալիս ազգերի զաղթականունութեան ժամանակ: Ահա մեծ ոչ միայն Ատրիպի արշաւանքի առաջն առաւ, այլ և եկեղեցու զանաքը գործադրեց լծուաւ ապա ժողովրդի ցաւերն ամօքելու: Գրիգոր